06.10.25 - 10.10.25
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ՀՀ, Երևան, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ) ս.թ. հոկտեմբերի 6-10 կազմակերպում է միջազգային երիտասարդական 11-րդ գիտաժողովը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին։

Ս.թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 13:30-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային երիտասարդական 11-րդ գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը։ Ողջույնի խոսքով հանդես կգան ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ՈՒԳԸ նախագահ Սիրանուշ Բաղումյանը, ինչպես նաև հրավիրյալ գործընկերները։ Բացման արարողության համերգային ծրագիրը կապահովի ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը և ոչ միայն։

Գիտաժողովի շրջանակում կանցկացվեն պանելային քննարկումներ, գիտաճանաչողական այցեր, մշակութային հանդիպումներ և այլն։

Գիտաժողովը ուսանողներին, ասպիրանտներին և երիտասարդ գիտնականներին հնարավորություն է ընձեռում ակադեմիական լսարանին ներկայացնելու իրենց գիտական հետազոտության արդյունքները, կատարելագործելու գիտական աշխատանք կատարելու հմտությունները, ինչպես նաև կապեր հաստատելու Հայաստանի և արտերկրի երիտասարդ հետազոտողների հետ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am